ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱԶԲ ՎԱՐԿ ԹԻՎ 3449-ARM

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԵՎ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2020թ. դեկտեմբերի 31-ին

ավարտված տարվա վերաբերյալ

**ԵՐԵՎԱՆ**

**Հունիս 2021**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ........ 3

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........ 4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 8

ՀԱՎԵԼՎԱԾ. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ........ 18

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

«Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության («Կազմակերպություն») ղեկավարությունը պատասխանատու է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) 3449-ARM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) «Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի» (Ծրագիր) 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային միջոցների սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի և ԱԶԲ-ի կողմից հրապարակված «Վարկի վճարման ձեռնարկին» (լրամշակված):

Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 31.12.2020թ.-ի վերաբերյալ:

Կազմակերպության ղեկավարությունը նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային միջոցների սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի և ԱԶԲ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ԱԶԲ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են, և
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Ճանապարհային դեպարտամենտ" պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 30-ին:

**Ստեփան Մաչյան**
Գլխավոր տնօրեն

**Մարինա Սաֆարյան**

Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ / Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության («Կազմակերպություն») ղեկավարությանը:

### *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված 3449-ARM վարկային համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և Կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի» (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագրությունը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային միջոցների սկզբունք):

### *Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ծրագրից և Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Հանգամանքի շեշտադրում – Դրամարկղային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում*

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային միջոցների սկզբունքով, որի պատճառով այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

BDO Armenia cjsc, is a member of BDO International Limited, a UK company limited by guarantee, and forms part of the international BDO network of independent member firms.

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «*ՀՀՀՀՄՍ-դրամարկղային միջոցների սկզբունք*» ստանդարտի և ԱՋԲ-ի կողմից հրապարակված «Վարկի վճարման ձեռնարկին» (լրամշակված) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

BDO Armenia cjsc, is a member of BDO International Limited, a UK company limited by guarantee, and forms part of the international BDO network of independent member firms.

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

## Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Կազմակերպության ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Վարկային միջոցները օգտագործվել են Վարկային Համաձայնագրի և ԱԶԲ-ի կողմից հրապարակված «Վարկի վճարման ձեռնարկին» (լրամշակված) համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը հատկացվել է և օգտագործվել է Վարկային Համաձայնագրի համապատասխան, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Վարկային Համաձայնագրի Բաժին IV-ում նշված ֆինանսական վավերապայմանները պահպանվել են:
4. Աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվել Վարկային Համաձայնագրի համապատասխան:

Մեր կարծիքով, 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Կազմակերպության ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
30 Հունիսի, 2021թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Նազիկ Չիթչյան
Աուդիտոր

BDO Armenia cjsc, is a member of BDO International Limited, a UK company limited by guarantee, and forms part of the international BDO network of independent member firms.

# ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր*
*ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

| | ծնթ. | Հաշվետու տարի 2020թ. | Կուտակային առ 31.12.2020թ. |
|---|---|---|---|
| | | Եվրո | Եվրո |
| **Ֆինանսավորում** | | | |
| ԱԶԲ 3449-ARM վարկի ֆինանսավորում | 10 | 5,631,284 | 14,456,107 |
| Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորում | | 1,239,894 | 2,054,001 |
| **Ընդամենը ֆինանսավորում** | | **6,871,178** | **16,510,108** |
| **Ծախսումներ** | 8 | | |
| Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ | | 5,452,059 | 13,786,074 |
| Գործառնական ծախսեր | | 107,745 | 357,427 |
| Տոկոսագումար | | 101,600 | 312,516 |
| Հարկեր, տուրքեր | | 1,222,992 | 2,038,590 |
| **Ընդամենը ծախսումներ** | | **6,884,397** | **16,494,608** |
| Փոխարժեքային օգուտ | | (12,274) | (10,110.23) |
| **Դրամական միջոցների զուտ (նվազում)/աճ** | | **(25,493)** | **5,390** |
| Դրամական միջոցների սկզբնական մնացորդ | 11 | 30,883 | - |
| **Դրամական միջոցների վերջնական մնացորդ** | 11 | **5,390** | **5,390** |

*Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Ճանապարհային դեպարտամենտ" պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Ստեփան Մաչյան**
Գլխավոր տնօրեն

**Մարինա Սաֆարյան**
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ / Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր*
*ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### *1.1. Ծրագրի ֆինանսավորումը*

2016թ. Նոյեմբերի 9-ին Հայաստանի հանրապետության և Ասիական Զարգացման բանկի (ԱԶԲ) միջև կնքվել է համաձայնագիր, համաձայն որի ԱԶԲ-ն Հայաստանի հանրապետությանն է տրամադրել 44,037,000 Եվրո գումարով 3449-ARM Վարկ «Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի» ֆինանսավորման նպատակով:

Ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 24-ին: Վարկային համաձայնագրով ծախսերի կատարման ավարտը սահմանվել է 2020թ. Նոյեմբերի 30-ը, առհանումների դիմումների ներկայացման ժամկետը՝ մինչև 2021թ. Մայիսի 31-ը: Համաձայն 2021թ. Փետրվարի 5-ի նամակի, ԱԶԲ-ի կողմից առհանումների դիմումների ներկայացման ժամկետը երկարացվել է մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:

Համաֆինանսավորումը տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից: Համաֆինանսավորումը տրամադրվում է ֆինանսավորելու ՀՀ օրենքներով պահանջվող հարկերը և տուրքերը:

### *1.2. Ծրագրի նպատակները*

3449-ARM վարկային համաձայնագրով իրականացվող Ծրագրի նպատակն է բարելավել տրանսպորտի արդյունավետությունը և անվտանգությունը ՀՀ տարածքում գտնվող M6 ավտոմայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածում:

Ծրագրի բաղադրիչներն են.

- Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի մոտավորապես 51.5 կիլոմետր երկարությամբ վերակառուցումը՝ բարելավված մայթերի վիճակը, անվտանգության առանձնահատկությունները և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը;
- ՏԿՆ-ի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և Ծրագրի իրականացման աջակցություն:

### *1.3. Ծրագրի բյուջեն*

Ծրագրի բյուջեն կազմում է 52,730,000 Եվրո գումար:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներով պահանջվող հարկերը և տուրքերը Վարկային միջոցներից չեն վճարվում: Վերջիններս կատարվում են Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորման հաշվին:

| Ծախսային հոդված | ԱԶԲ Վարկ 3449-ARM | Հայաստանի հանրապետությ ուն | Ընդամենը |
|---|---|---|---|
| | Եվրո | Եվրո | Եվրո |
| Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ | 35,376,000 | - | 35,376,000 |
| Գործառնական ծախսեր | 965,000 | - | 965,000 |
| Տոկոսագումար | 572,000 | - | 572,000 |
| Այլ (ներառյալ տեղական հարկերը) | - | 8,693,000 | 8,693,000 |
| Չբաշխված | 7,124,000 | - | 7,124,000 |
| **Ընդամենը** | **44,037,000** | **8,693,000** | **52,730,000** |

### *1.4. Ծրագիրն իրականացնող հաստատություն*

Ծրագիրը իրականացվում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (Կազմակերպություն): Կազմակերպությունը «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի իրավահաջորդն է: Վերակազմավորումը կատարվել է համաձայն ՀՀ Կառավարության 15.12.2016թ. թիվ 1304-Ա որոշման:

Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը մինչև 2019թ. հունիսի 20-ը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն էր, իսկ դրանից հետո համաձայն ՀՀ Կառավարության 06.06.2019թ. թիվ 733-Ն որոշման՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Կազմակերպության հիմնական նպատակն է ՀՀ-ում տրանսպորտի ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը:

Կազմակերպության գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, Նալբանդյան փողոց 28, իսկ գործունեության հասցեն՝ ՀՀ, Երևան, Կառավարական 3 շենք:

### *1.5. Հողերի Օտարման և Տարաբնակեցման Ծրագիր (ՀՕՏԾ)*

Ծրագրի իրականացման համար պահանջվում է խիստ ազդեցության ենթարկված անձերի հողի օտարում և տարաբնակեցում: ՀՀ Կառավարության 2017թ. նոյեմբերի 9-ի թիվ 1412-Ն որոշմամբ Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում որոշ տարածքների, գույքային իրավունքների նկատմամբ ճանաչվել է հանրային գերակա շահ:
ՀՕՏԾ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ Կառավարության միջոցներից:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված "ՀՀՀՀՄՍ-դրամարկղային միջոցների սկզբունք" ստանդարտի և ներկայացված է Ասիական Զարգացման Բանկի կողմից հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկին" (լրամշակված) համապատասխան:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային միջոցների սկզբունք*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային միջոցների սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային միջոցների սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամարկղային միջոցների սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

### *2.3 Ներկայացման արժույթը*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Եվրոն է (EUR):

### *2.4 Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:
Ծրագրի բանկային հաշիվները վարվում են և գործարքները իրականացվում են Եվրոյով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են Եվրոյի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության հատկացումները և դրանց հաշվին կատարված ծախսումները ներկայացվում են Եվրոյով՝ կիրառելով գործարքի նախորդ օրվա դրությամբ հայտարարված արտարժույթի փոխարկման փոխարժեքը,
- ՀՀ դրամով արտահայտված Ասիական Զարգացման Բանկի ֆինանսավորման հաշվին իրականացվող վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են Եվրոյով՝ կիրառելով գործարքի նախորդ օրվա դրությամբ հայտարարված արտարժույթի փոխարկման փոխարժեքը:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքն է՝ 1 Եվրոն = 641.11 դրամ (31.12.2019՝ 1 Եվրոն = 537.26 դրամ):

*2.5 Դրամական միջոցներ*

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

*2.6 Հարկեր*

Օրենքով պահանջվող բոլոր հարկերի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությանը համաձայն:

*2.7 Բյուջե*

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով հաշվետու ժամանակաշրջանի թարմացված բյուջեն:

**3. Վարկային միջոցների մասհանման հաշվետվություն**

*ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM*
*Եվրո*

| Դիմումի համար | Վճարման ամսաթիվ | Ծախսային հոդվածներ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ | Գործառնական ծախսեր | Տոկոսա-գումար | Կանխա-վճար | |
| | | 1 | 2 | 3 | | |
| 37 DP | 13.02.2020 | 188,278 | - | - | - | 188,278 |
| 38 | 30.04.2020 | 7,031 | 67,969 | - | (40,919) | 34,081 |
| 39 DP | 06.03.2020 | 89,158 | - | - | - | 89,158 |
| 40 DP | 16.03.2020 | 54,477 | - | - | - | 54,477 |
| 41 DP | 16.03.2020 | 242,688 | | | | 242,688 |
| 42 DP | 17.03.2020 | 193,678 | | | | 193,678 |
| 43 DP | 22.05.2020 | 271,548 | | | | 271,548 |
| 44 DP | 12.06.2020 | 130,836 | | | | 130,836 |
| 45 DP | 12.06.2020 | 54,135 | - | - | - | 54,135 |
| 46 DP | 12.06.2020 | 69,979 | - | - | - | 69,979 |
| 48 DP | 29.07.2020 | 176,432 | - | - | - | 176,432 |
| 49 | 26.08.2020 | - | 55,028 | - | - | 55,028 |
| 50DP | 06.08.2020 | 204,741 | - | - | - | 204,741 |
| 51DP | 07.08.2020 | 506,248 | - | - | - | 506,248 |
| 52DP | 06.08.2020 | 61,986 | - | - | - | 61,986 |
| 53DP | 19.08.2020 | 177,629 | - | - | - | 177,629 |
| 54DP | 19.08.2020 | 577,277 | - | - | - | 577,277 |
| 55 DP | 01.10.2020 | 371,169 | - | - | - | 371,169 |
| 56 DP | 16.10.2020 | 194,797 | - | - | - | 194,797 |
| 57 DP | 09.11.2020 | 6,387 | - | - | - | 6,387 |
| 58 DP | 16.10.2020 | 133,674 | - | - | - | 133,674 |
| 59 DP | 02.11.2020 | 224,985 | - | - | - | 224,985 |
| 60 DP | 18.11.2020 | 65,110 | - | - | - | 65,110 |
| 61 DP | 08.12.2020 | 159,090 | - | - | - | 159,090 |
| 62 DP | 08.12.2020 | 168,643 | - | - | - | 168,643 |
| 63 DP | 14.12.2020 | 73,846 | - | - | - | 73,846 |
| 64 DP | 14.12.2020 | 116,062 | - | - | - | 116,062 |
| 65 DP | 15.12.2020 | 487,317 | - | - | - | 487,317 |
| 66 DP | 16.12.2020 | 93,480 | - | - | - | 93,480 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 67 DP | 24.12.2020 | 346,925 | - | - | - | 346,925 |
| CAB | 15.11.2020 | - | - | 57,040 | - | 57,040 |
| CAB | 15.05.2020 | - | - | 44,560 | - | 44,560 |
| | | **5,447,606** | **122,997** | **101,600** | **(40,919)** | **5,631,284** |

## 4. Ծրագրի միջոցների վերաբերյալ հաշվետվություն

Ծրագրի միջոցների վերաբերյալ հաշվետվությունը բացահայտում է Ծրագրի ակտիվները, պարտավորությունները և զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն պատրաստված է հաշվեգրման սկզբունքի համաձայն, այսինքն՝ գործարքները ճանաչվում են, երբ տեղի են ունենում (և ոչ թե այն դեպքում, երբ գումարը ստացվում կամ վճարվում է):

| | ծնթ. | 31.12.2020թ. | 31.12.2019թ. |
|---|---|---|---|
| | | Եվրո | Եվրո |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Դրամական միջոցներ | 11 | 5,390 | 30,883 |
| Կանխավճարներ | 12 | 4,071,127 | 4,639,881 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | 4,076,517 | **4,670,764** |
| | | | |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 13 | 719,395 | 524,610 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **719,395** | **524,610** |
| | | | |
| ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| **Ֆինանսավորում** | | | |
| ԱԶԲ 3449-ARM վարկից | 10 | 14,456,107 | 8,824,823 |
| Հայաստանի Հանրապետությունից | | 2,054,001 | 814,107 |
| | | **16,510,108** | **9,638,930** |
| **Անողական ծրագրային ծախսեր** | | | |
| Ծրագրային ծախսեր | | (12,405,267) | (5,284,024) |
| Տոկոսներ | | (312,516) | (210,916) |
| | | **(12,717,783)** | **(5,494,940)** |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ | | **(435,202)** | **2,164** |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ | | **3,357,122** | **4,146,154** |

## 5. Ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվություն

*Եվրո*

| Հիմնական բաղադրիչներ | Ծախսումներ | | Ֆինանսավորման աղբյուրը | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM | ՀՀ ֆինան-սա-վորում | ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM | ՀՀ ֆինանսա-վորում |
| | Հաշվետու տարի 2020թ. | Կուտակային առ 31.12.2020թ. | Հաշվետու տարի 2020թ. | | Կուտակային առ 31.12.2020թ. | |
| Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի մոտավորապես 51.5 կիլոմետր երկարությամբ վերակառուցումը՝ բարելավված մայթերի վիճակը, անվտանգության առանձնահատկությունները և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը | 6,667,902 | 15,796,191 | 5,452,059 | 1,215,843 | 13,786,074 | 2,010,117 |
| Ծրագրի կառավարում | 114,894 | 385,900 | 107,745 | 7,149 | 357,427 | 28,473 |
| Տոկոսագումար | 101,600 | 312,516 | 101,600 | - | 312,516 | - |
| **Ընդամենը** | **6,884,397** | **16,494,608** | **5,661,405** | **1,222,992** | **14,456,018** | **2,038,590** |

## 6. Վարկային Համաձայնագրի վավերապայմանների համապատասխանություն

ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM Վարկային Համաձայնագրի ֆինանսական վավերապայմաններն են (հոդված IV).

| Վավերապայմանի բնութագիրը | Նշումներ |
|---|---|
| Ծրագրի համար առանձին հաշիվների պահպանում | ԱԶԲ Վարկի ֆինանսավորումը կատարվում է առանձին բանկային հաշվով :ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը կատարվում է առանձին հաշվով: |
| Տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ հետևողականորեն կիրառված աուդիտի ստանդարտներին համապատասխան, անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը և իրավասությունները ընդունելի են ԱԶԲ-ի կողմից: | Ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են աուդիտի՝ ԱՄՍ-ին համապատասխան: Աուդիտորները ընտրվում են այն աուդիտորական ընկերությունների կարճ-ցանկից, որոնց որակավորումը և փորձը նախապես հաստատվում է ԱԶԲ-ի կողմից: Աուդիտի պայմանները և շրջանակը նախապես համաձայնեցվում է ԱԶԲ-ի հետ: |
| Մինչև յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից վեց ամիսը, ԱԶԲ-ին տրամադրել աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները: | 31.12.2020թ. ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները ԱԶԲ-ին նախատեսվում է ներկայացնել մինչև 30.06.2021թ.-ը: |
| ԱԶԲ-ին տրամադրել հաշիվների, ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի վերաբերյալ այլ տեղեկատվություն, որը ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ կարող է ողջամտորեն պահանջել: | ԱԶԲ-ի կողմից պահանջված որևէ տեղեկատվություն տրամադրվել է պատշաճ ժամկետում: |
| Թույլ տալ ԱԶԲ-ին, նման պահանջի դեպքում, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և դրա հետ կապված ֆինանսական հարցերը քննարկել նշանակված աուդիտորի հետ, և լիազորել ու պահանջել աուդիտորի ներկայացուցչի մասնակցել ԱԶԲ-ի կողմից պահանջվող նման քննարկման: | Կազմակերպությունը կհետևի վավերապայմաններին, երբ նմանատիպ պահանջ կլինի ԱԶԲ-ի կողմից: |
| Կազմակերպությունը պետք է հնարավորություն ընձեռնի ԱԶԲ-ի ներկայացուցիչներին ստուգելու Ծրագիրը, Ապրանքներն ու Աշխատանքները և դրան առնչվող ցանկացած գրանցում ու փաստաթուղթ: | Կազմակերպությունը ընդունում է ԱԶԲ-ի կողմից ցանկացած նման պահանջի կատարում: |

## 7. Ծրագրի իրականացման առաջընթացի հաշվետվություն

| Ծախսային հոդվածներ | 31.12.2020թ. դրությամբ | Բյուջե | Կատարում* |
|---|---|---|---|
| | Եվրո | Եվրո | % |
| Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ | 13,786,074 | 35,376,000 | 39% |
| Գործառնական ծախսեր | 357,427 | 965,000 | 37% |
| Տոկոսագումար | 312,516 | 572,000 | 55% |
| Այլ (ներառյալ տեղական հարկեր) | 2,038,590 | 8,693,000 | 23% |
| Չբաշխված | | 7,124,000 | - |
| **Ընդամենը** | **16,494,608** | **52,730,000** | 31% |

(*) Վարկային պայմանագիրը ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 9-ին, վարկի տրամադրման վերջնաժամկետը սահմանվել է 2020 թվականի նոյեմբերի 30-ին: 2020 թվականի դեկտեմբերի 31-ին վճարումները կատարվել են կանխատեսվող ծախսերի 31%-ի չափով, ծրագրի իրականացման դանդաղ առաջընթացը պայմանավորված է պլանավորված տեմպով աշխատանքների իրականացմանը խոչընդոտող անընդհատ երթևեկությամբ, (տեղանքից ելնելով երթևեկության կազմակերպման այլընտրանքային տարբերակները բացակայում են) հորատապայթեցման աշխատանքների օրերն ու ժամերը ՀԿԵ-ի հետ համաձայնեցման գործընթացի տևողությամբ, հողերի օտարման հետ, ինչպես նաև աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր կոմունիկացիաների տեղափոխման հետ կապված խնդիրներով: Ծրագրի իրականացման դանդաղ տեմպերը նաև պայմանավորված են COVID-19 համավարակի տարածման հետ: Դրա հետ պայմանավորված խախտվել են շինարարական աշխատանքների կատարման ժամկետները, առաջացել են ծրագրի համակարգման հետ կապված դժվարություններ:

## 8. Ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվություն

*Եվրո*

| Հոդվածներ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի 2020թ. | Աճողական առ 31.12.2020թ. | Հաշվետու տարի 2020թ. | Աճողական առ 31.12.2020թ. | Հաշվետու տարի 2020թ. | Աճողական առ 31.12.2020թ. |
| Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ | 5,452,059 | 13,786,074 | 8,678,449 | 17,012,464 | (3,226,390) | (3,226,390) |
| Գործառնական ծախսեր | 107,745 | 357,427 | 132,861 | 382,543 | (25,115) | (25,115) |
| Տոկոսագումար | 101,600 | 312,516 | 101,600 | 312,516 | - | - |
| Այլ (հարկեր) | 1,222,992 | 2,038,590 | 1,129,230 | 1,944,828 | 93,762 | 93,762 |
| **Ընդամենը** | **6,884,397** | **16,494,608** | **10,042,140** | **19,652,351** | **(3,157,743)** | **(3,157,743)** |

9. Փաստացի մասհանումների մասին հաշվետվություն

*Եվրո*

| Հիմնական բաղադրիչներ | Հաշվետու տարի 2020թ. | | | Կուտակային առ 31.12.2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM | ՀՀ ֆինանսա-վորում | Ընդամենը | ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM | ՀՀ ֆինանսա-վորում | Ընդամենը |
| Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ | 5,452,059 | 1,215,843 | 6,667,902 | 13,786,074 | 2,010,117 | **15,796,191** |
| Գործառնական ծախսեր | 107,745 | 7,149 | 114,894 | 357,427 | 28,473 | **385,900** |
| Տոկոսագումար | 101,600 | - | 101,600 | 312,516 | - | **312,516** |
| **Ընդամենը** | **5,661,405** | **1,222,992** | **6,884,397** | **14,456,018** | **2,038,590** | **16,494,608** |

10. ԱԶԲ 3449-ARM վարկի ֆինանսավորում

| | Հաշվետու տարի 2020թ. | Աճողական առ 31.12.2020թ. |
|---|---|---|
| | Եվրո | Եվրո |
| Կանխավճար | (40,919) | 78,160 |
| Փոխհատուցման դիմումներ (SOE) | 130,028 | 543,491 |
| Ուղիղ վճարում | 5,440,575 | 13,521,940 |
| Տոկոսագումարի առհանում | 101,600 | 312,516 |
| **Ընդամենը** | **5,631,284** | **14,456,107** |

11. Դրամական միջոցներ

| | 31.12.2020թ. | 31.12.2019թ. |
|---|---|---|
| | Եվրո | Եվրո |
| Ծրագրի հաշիվ (ԱԶԲ Վարկ) (Եվրո) | 92 | 30,213 |
| Ընթացիկ հաշիվ, ՀՀ համաֆինանսավորում, (ՀՀ դրամ) | 3,316 | 550 |
| Ընթացիկ հաշիվ, ՀՀ համաֆինանսավորում, (շինարարական աշխատանքներ) (ՀՀ դրամ) | 1,982 | 120 |
| **Ընդամենը** | **5,390** | **30,883** |

12. Կանխավճարներ

| Կանխավճարներ | 31.12.2020թ. | 31.12.2019թ. |
|---|---|---|
| | Եվրո | Եվրո |
| Շինարարական աշխատանքների գծով (ա) | 4,068,967 | 4,638,764 |
| Խորհրդատվության գծով | 1,023 | 1,117 |
| Գործառնական ծախսերի գծով | 1,137 | - |
| **Ընդամենը** | **4,071,127** | **4,639,881** |

ա) Հաշվետու ամսաթվով առկա կանխավճարները վերաբերում են շինարարական պայմանագրերի 20%-ի չափով կանխավճարին: Տրամադրված կանխավճարի մասով ստացվել են բանկային երաշխիքներ: Երաշխիքների ժամկետները սահմանված են մինչև 30.09.2021թ. և 31.08.2021թ.:

**13. Կրեդիտորական պարտքեր**

| Կրեդիտորական պարտքեր | 31.12.2020թ. | 31.12.2019թ. |
|---|---|---|
| | Եվրո | Եվրո |
| Շինարարական աշխատանքների գծով | 275,856 | 182,738 |
| Հետերաշխիքային գումարներ (ա) | 432,964 | 169,437 |
| Խորհրդատվության գծով | | 172,242 |
| Գործառնական ծախսերի գծով | 10,574 | 193 |
| **Ընդամենը** | **719,395** | **524,610** |

(ա) Հետերաշխիքային գումարները պահվում են շինարարական աշխատանքների գծով ներկայացված հաշիվների 5%-ի չափով, որից 2.5%-ը ենթակա է վճարման շինարարական աշխատանքի ընդունման վկայագրի հաստատումից հետո, իսկ մնացած 2.5%-ը՝ վկայագրի ընդունումից մեկ տարի հետո:

**14. Դատական հայցեր**

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ առկա են երկու դատական հայցեր:
Ծրագրի ղեկավարության կարծիքով, նշված դատական հայցերը չունեն էական ազդեցություն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

## ՀԱՎԵԼՎԱԾ. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

*Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր*
*ԱԶԲ վարկ թիվ 3449-ARM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*Եվրո*

| Նկարագրություն | Վճարված գումար | Փոխարժեք | |
|---|---|---|---|
| | ՀՀ դրամ (բացառությամբ նշվածից) | Եվրո/դրամ | Եվրո |
| **1. Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ (ԱԶԲ ֆինանսավորում)** | | | |
| ADB/M6/CS/QCBS/01, 03.04.2018 | ԱՄՆ դոլար 1,141,134 | 1.18 | 1,005,095 |
| CW-ICB-M6/2016-1, 30.11.2017 | 593,244,906 | 590.24 | 1,147,906 |
| CW-ICB-M6/2016-2 | 635,929,303 | 553.99 | 6,387 |
| ADB/M6/CS/SSS/01 | 3,677,522 | 575.82 | 2,312,859 |
| CW-ICB-M6/2016-3 | 1,339,666,899 | 579.23 | 968,328 |
| ADB/M6/IC/SFWC_01 | 3,886,115 | 580.81 | 6,691 |
| ADB/M6/CS/LCS/01, 19.06.2019 | 2,776,500 | 579.23 | 4,793 |
| **Ընդամենը աշխատանքներ և խորհրդատվություն** | | | **5,452,059** |
| **2. Ծրագրի կառավարման աջակցություն (ԱԶԲ ֆինանսավորում), այդ թվում** | | | |
| Աշխատավարձ | | | |
| | 402,301 | 527.47 | 763 |
| | 402,301 | 527.47 | 763 |
| | 414,802 | 527.47 | 786 |
| | 272,016 | 527.47 | 516 |
| | 576,498 | 527.47 | 1,093 |
| | 297,003 | 527.47 | 563 |
| | 721,389 | 527.47 | 1,368 |
| | 44,160 | 527.47 | 84 |
| | 6,003 | 527.47 | 11 |
| | 297,003 | 524.48 | 566 |
| | 729,098 | 519.53 | 1,403 |
| | 402,297 | 523.13 | 769 |
| | 402,297 | 523.13 | 769 |
| | 414,800 | 523.13 | 793 |
| | 576,500 | 523.13 | 1,102 |
| | 297,002 | 523.13 | 568 |
| | 297,002 | 523.13 | 568 |
| | 45,000 | 523.13 | 86 |
| | 6,000 | 523.13 | 11 |
| | 729,103 | 544.59 | 1,339 |
| | 44,999 | 544.59 | 83 |
| | 402,301 | 554.34 | 726 |
| | 402,301 | 554.34 | 726 |
| | 414,802 | 554.34 | 748 |
| | 576,503 | 554.34 | 1,040 |
| | 296,999 | 554.34 | 536 |
| | 5,998 | 554.34 | 11 |
| | 402,302 | 520.57 | 773 |
| | 402,302 | 520.57 | 773 |
| | 297,001 | 520.57 | 571 |
| | 297,001 | 520.57 | 571 |
| | 414,801 | 520.57 | 797 |

| | | | |
|---|---|---|---|
| | 576,499 | 524.93 | 1,098 |
| | 729,100 | 521.74 | 1,397 |
| | 45,000 | 521.74 | 86 |
| | 3,000 | 521.74 | 6 |
| | 402,300 | 530.41 | 758 |
| | 402,300 | 530.41 | 758 |
| | 414,802 | 530.41 | 782 |
| | 296,998 | 530.41 | 560 |
| | 576,503 | 530.41 | 1,087 |
| | 296,998 | 530.41 | 560 |
| | 729,102 | 530.41 | 1,375 |
| | 45,000 | 530.41 | 85 |
| | 5,999 | 530.41 | 11 |
| | 296,998 | 530.41 | 560 |
| | 402,302 | 543.85 | 740 |
| | 402,302 | 543.85 | 740 |
| | 414,800 | 543.85 | 763 |
| | 576,497 | 543.85 | 1,060 |
| | 297,002 | 543.85 | 546 |
| | 297,002 | 543.85 | 546 |
| | 729,102 | 543.85 | 1,341 |
| | 44,998 | 543.85 | 83 |
| | 5,999 | 543.85 | 11 |
| | 514,528 | 570.26 | 902 |
| | 398,298 | 570.26 | 698 |
| | 414,801 | 570.26 | 727 |
| | 576,499 | 570.26 | 1,011 |
| | 297,003 | 570.26 | 521 |
| | 148,003 | 575.46 | 257 |
| | 526,763 | 579.23 | 909 |
| | 398,302 | 579.23 | 688 |
| | 414,798 | 579.23 | 716 |
| | 149,001 | 579.23 | 257 |
| | 576,502 | 579.23 | 995 |
| | 297,000 | 579.23 | 513 |
| | 775,102 | 579.23 | 1,338 |
| | 73,000 | 579.23 | 126 |
| | 6,001 | 579.23 | 10 |
| | 532,300 | 570.03 | 934 |
| | 398,303 | 570.03 | 699 |
| | 414,799 | 570.03 | 728 |
| | 297,003 | 570.03 | 521 |
| | 576,500 | 570.03 | 1,011 |
| | 297,003 | 570.03 | 521 |
| | 775,098 | 570.03 | 1,360 |
| | 72,998 | 570.03 | 128 |
| | 6,002 | 570.03 | 11 |
| | 140,000 | 571.78 | 245 |
| | 532,297 | 578.32 | 920 |
| | 398,301 | 578.32 | 689 |
| | 414,800 | 578.32 | 717 |
| | 157,002 | 578.32 | 271 |
| | 576,498 | 578.32 | 997 |
| | 297,002 | 578.32 | 514 |

| | | | |
|---|---|---|---|
| | 775,099 | 578.32 | 1,340 |
| | 73,001 | 578.32 | 126 |
| | 5,997 | 578.32 | 10 |
| | 532,300 | 605.94 | 878 |
| | 398,303 | 605.94 | 657 |
| | 414,802 | 605.94 | 685 |
| | 297,001 | 605.94 | 490 |
| | 576,497 | 605.94 | 951 |
| | 297,001 | 605.94 | 490 |
| | 775,100 | 605.94 | 1,279 |
| | 72,998 | 605.94 | 120 |
| | 5,999 | 605.94 | 10 |
| | 532,302 | 637.06 | 836 |
| | 398,303 | 637.06 | 625 |
| | 414,803 | 637.06 | 651 |
| | 296,997 | 637.06 | 466 |
| | 576,501 | 637.06 | 905 |
| | 296,997 | 637.06 | 466 |
| | 775,098 | 637.06 | 1,217 |
| | 73,001 | 637.06 | 115 |
| | 6,001 | 637.06 | 9 |
| | 541,798 | 636.96 | 851 |
| | 141,501 | 636.96 | 222 |
| | 180,903 | 636.96 | 284 |
| | 141,501 | 636.96 | 222 |
| | 288,753 | 636.96 | 453 |
| | 207,897 | 636.96 | 326 |
| | | | **70,848** |
| Ապահովագրություն | | | |
| | 572,601 | 606.82 | 944 |
| | | | **944** |
| | | | |
| Հեռահաղորդակցության ծախսեր | | | |
| | 66,667 | 528.43 | 126 |
| | 11,409 | 528.43 | 22 |
| | 66,665 | 527.79 | 126 |
| | 10,175 | 524.48 | 19 |
| | 66,667 | 535.91 | 124 |
| | 15,712 | 546.11 | 29 |
| | 66,668 | 539.43 | 124 |
| | 15,345 | 531.52 | 29 |
| | 2,131 | 531.52 | 4 |
| | 66,664 | 519.8 | 128 |
| | 11,869 | 524.73 | 23 |
| | 1,248 | 526.57 | 2 |
| | 66,666 | 546.4 | 122 |
| | 10,955 | 546.4 | 20 |
| | 1,752 | 540.69 | 3 |
| | 66,667 | 547.57 | 122 |
| | 9,632 | 550.71 | 17 |
| | 952 | 550.33 | 2 |
| | 113,898 | 562.43 | 203 |
| | 66,665 | 573.17 | 116 |
| | 15,167 | 572.14 | 27 |

| | | | |
|---|---|---|---|
| | 66,665 | 576.64 | 116 |
| | 12,816 | 569.58 | 23 |
| | 4,865 | 576.44 | 8 |
| | 66,665 | 576.44 | 116 |
| | 8,602 | 577.34 | 15 |
| | 66,667 | 586.6 | 114 |
| | 66,665 | 623.74 | 107 |
| | | | **1,886** |
| Գործուղումների գծով ծախսեր | | | |
| | 11,031 | 529 | 21 |
| | 11,031 | 529 | 21 |
| | 11,031 | 529 | 21 |
| | 7,002 | 524 | 13 |
| | 7,002 | 524 | 13 |
| | 7,002 | 524 | 13 |
| | 16,649 | 517 | 32 |
| | 16,649 | 517 | 32 |
| | 16,649 | 517 | 32 |
| | 18,002 | 579 | 31 |
| | 18,002 | 579 | 31 |
| | 18,001 | 566 | 32 |
| | 18,001 | 566 | 32 |
| | 18,001 | 566 | 32 |
| | 32,999 | 574 | 57 |
| | 32,999 | 574 | 57 |
| | 6,000 | 605 | 10 |
| | 6,000 | 605 | 10 |
| | 6,000 | 605 | 10 |
| | 35,999 | 605 | 60 |
| | 13,801 | 638 | 22 |
| | 13,801 | 638 | 22 |
| | 6,003 | 641 | 9 |
| | 6,003 | 641 | 9 |
| | | | **623** |
| Գրասենյակային նյութեր և պիտույքներ | | | |
| | 449,998 | 529 | 850 |
| | 449,998 | 536 | 840 |
| | 449,997 | 554 | 812 |
| | 450,003 | 521 | 863 |
| | 449,999 | 541 | 832 |
| | 449,998 | 544 | 827 |
| | 449,998 | 571 | 789 |
| | 450,001 | 578 | 778 |
| | 449,999 | 579 | 777 |
| | 449,998 | 587 | 767 |
| | 450,003 | 640 | 703 |
| | | | **8,838** |
| Մասնագիտական/խորհրդատվական ծառայություններ | | | |
| | 448,498 | 546 | 821 |
| | 448,498 | 532 | 843 |
| | 448,502 | 529 | 848 |
| | 448,499 | 541 | 829 |
| | 438,497 | 550 | 797 |
| | 162,900 | 570 | 286 |

| | | | |
|---|---|---|---|
| | 222,502 | 575 | 387 |
| | 438,500 | 579 | 757 |
| | 162,902 | 581 | 281 |
| | 438,499 | 566 | 775 |
| | 162,900 | 572 | 285 |
| | 438,499 | 585 | 749 |
| | 438,501 | 606 | 724 |
| | 162,901 | 606 | 269 |
| | 438,499 | 635 | 691 |
| | 371,501 | 641 | 580 |
| | 162,903 | 637 | 256 |
| | 162,901 | 637 | 256 |
| | 215,999 | 637 | 339 |
| | 259,753 | 637 | 408 |
| | | | **11,179** |
| UJL | | | |
| | 9,602 | 528 | 18 |
| | 8,402 | 528 | 16 |
| | 9,600 | 527 | 18 |
| | 268,502 | 528 | 509 |
| | 414,798 | 528 | 786 |
| | 75,390 | 523 | 144 |
| | 8,400 | 523 | 16 |
| | 9,602 | 517 | 19 |
| | 205,334 | 523 | 393 |
| | 414,800 | 523 | 793 |
| | 8,398 | 536 | 16 |
| | 9,601 | 546 | 18 |
| | 256,277 | 554 | 462 |
| | 12,223 | 539 | 23 |
| | 414,800 | 539 | 769 |
| | 12,102 | 523 | 23 |
| | 268,502 | 525 | 512 |
| | 414,800 | 521 | 796 |
| | 245,055 | 520 | 471 |
| | 9,598 | 526 | 18 |
| | 268,499 | 530 | 506 |
| | 30,800 | 546 | 56 |
| | 268,499 | 544 | 494 |
| | 32,516 | 541 | 60 |
| | 9,598 | 550 | 17 |
| | 5,331 | 554 | 10 |
| | 12,002 | 554 | 22 |
| | 268,501 | 570 | 471 |
| | 12,001 | 571 | 21 |
| | 11,999 | 572 | 21 |
| | 2,601 | 579 | 4 |
| | 28,348 | 579 | 49 |
| | 268,499 | 581 | 462 |
| | 268,501 | 570 | 471 |
| | 12,001 | 574 | 21 |
| | 5,199 | 576 | 9 |
| | 9,598 | 576 | 17 |
| | 268,502 | 578 | 464 |

| | | | |
|---|---|---|---|
| | 9,603 | 585 | 16 |
| | 8,401 | 605 | 14 |
| | 268,498 | 606 | 443 |
| | 742,999 | 620 | 1,199 |
| | 9,603 | 640 | 15 |
| | 268,502 | 637 | 421 |
| | 743,003 | 637 | 1,166 |
| | 176,784 | 637 | 278 |
| | 13,920 | 637 | 22 |
| | 134,753 | 637 | 212 |
| | 404,253 | 637 | 635 |
| | 8,639 | 637 | 14 |
| | | | **13,428** |
| Ընդամենը ծրագրի կառավարման աջակցություն | | | **107,745** |
| | | | |
| 3. Տոկոսագումար | | | **101,600** |
| Ընդամենը ԱԶԲ ֆինանսավորմամբ | | | **5,661,404** |
| Հարկեր (ՀՀ Կառավարություն) | | | **1,222,992** |
| Ընդամենը ծրագրի ծախսեր | | | **6,884,396** |